ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Կրտսեր դպրոցականների մեջ համագործակցելու կարողության ձևավորում

Հետազոտող ուսուցիչ՝ Քեռշկարյան Մարիամ

Դպրոց՝ *Վ.Գ. Բելինսկու անվան հ.38 հիմն.*

Ղեկավար՝ Ելենա Ջիլավյան

ԵՐԵՎԱՆ -2022-

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

Կրտսեր դպրոցականների մեջ համագործակցելու կարողության ձևավորումը 5

Փոքր խմբերով աշխատելու առավելությունները 6

Համագործակցային ուսուցման մեթոդները 7

Համագործակցային ֆորմալ և ոչ ֆորմալ խմբեր 10

Համագործակցային ուսուցման տարրերը 11

Համագործակցային ուսուցման հիմնական սկզբունքները 12

Համագործակցային աշխատանքի առավելությունները 13

Դասի պլան 19

Գրականության ցանկ 22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներին տրապետելն է: Այս իմաստով ուսուցման նոր մեթոդների ու եղանակների իմացությունը շատ կարևոր է: Համագործակցային ուսուցման ներդրումը իր հետ բերեց մեծ առաջընթաց ուսուցման և ուսումնառության գործընթացում:
Դասավանդման խնդիրների լուծման նպատակով համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է: Չնայած իր տարածմանը ուսուցիչների շրջանում և երկարատև պատմությունը, այն չի գտել լայն կիրառում: Դրա պատճառն ամենևին սովորողների առաջընթացի և ընդհանուր զարգացման վրա համագործակցային ուսուցման դրական ազդեցության վկայությունների բացակայությունը չէ: Իրականում, համագործակցային ուսուցումը ժամանակակից կրթության, դասավանդման և ուսուցման ամենաշատ ուսումնասիրված ոլորտներից մեկն է: Կարճ ասած՝ գիտելիքների հասարակությունում անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ուսուցման վերաբերող հետազոտությունների արձագանքները բավական խոստումնալից են:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, եզրակացությունից, գրականության ցանկից, ունի առանձին մասեր՝ կրտսեր դպրոցականների մեջ համագործակցելու կարողության ձևավորումը, փոքր խմբերով աշխատելու առավելությունները, համագործակցային ուսուցման մեթոդները,համագործակցային ֆորմալ և ոչ ֆորմալ խմբեր, համագործակցային ուսուցման տարրերը, համագործակցային ուսուցման հիմնական սկզբունքները և համագործակցային աշխատանքի առավելությունները որոնք ներկայացված են հաջորդաբար, ունեն կուռ կառուցվածք և ամբողջական պատկերացում են տալիս թեմայի վերաբերյալ:

Աշխատանքի նպատակը ներկայումս անձնակենտրոն հայեցակարգի համատեքստում շեշտադրվում է ուսումնական աշխատանքի անհատական և խմբային ձևերի կազմակերպումը: Համագործակցային ուսուցման նապտակն է՝

- միջանձնային հարաբերություններ կառուցելու կարողության ձևավորում,
- անձի զարգացման և նրա անհատականության ձևավորում,
- ընկերություն և փոխօգնություն, փոխադարձ պատասխանատվության համոզմունքի ձևավորում
- շրջապատի հետ առողջ փոխհարաբերությունների կառուցման ձևավորում,

- համագործակցային և խմբային աշխատանք իրականացնելու կարողության ձևավորում:

Աշխատանքի խնդիրները: Համագործակցային ուսուցումը խնդիր է դնում՝

- Բարձրացնել սովորողների ուշադրության կենտրոնացումը,
- Համագործակցելու, հաղորդակցվելու մշակույթը,
- Դաստիարակելու խմբում աշխատելու պատասխանատվություն, նախաձեռնողականություն հանդուրժողականություն:

Փորձը ցույց է տալիս, որ համատեղ ուսուցումը ոչ միայն դյուրին է, հետաքրքիր, այլև բավականին արդյունավետ:

Արդիականությունը և գործնական նշանակությունը

Համագործակցային ուսուցումը նպաստում է կրտսեր դպրոցականների մտածողության զարգացմանը, նրանք սովորում են լսել, ընկալել և վերլուծել ուսումնական նյութը, ինքնուրույն որոշումներ կայացնել, ձևավորում է ինքնագնահատական, համագործակցության, փոխօգնության, կոնֆլիկտների, խնդիրների, համատեղ լուծման կարողություններ:

Համագործակցային մեթոդները իրենց ժամանակակից գործառույթներով մեծ ներուժ ունեն աշակերտակենտրոն ուսուցում կազմակերպելու համար, ինչը ևս կրթական բարեփոխումների կարևոր և արդիական պահանջներից է: Ժամանակակից կրթական գործընթացում կարևորվում է ոչ թե պատրաստի գիտելիքի մատուցումն ուսուցչի կողմից, այլ աշակերտին մասնակից դարձնելը այդ գիտելիքի ձեռքբերմանը:

Համագործակցությունը ստեղծում է ինքնաճանաչման ավելի բարձր մակարդակ, քան կարող են ապահովել անհատական ուսուցման եղանակները: Համագործակցային իրավիճակներում անհատները միտված են փոխներգործելու, նպաստելու միմյանց հաջողությանը, ձևավորելու հետաքրքրությունների լայն շրջանակ, հետևաբար տալիս են ճշմարիտ հետադարձ կապ:

Կարողունակություններ

Համագործակցային ուսուցումը նպաստում է կրտսեր դպրոցականների մտածողության զարգացմանը, նրանք սովորում են լսել, ընկալել և վերլուծել ուսումնական նյութը, ինքնուրույն որոշումներ կայացնել, ձևավորում է

ինքնագնահատական, համագործության, փոխօգնության, կոնֆլիկտիտների, խնդիրների, համատեղ լուծման կարողություններ:

Կրտսեր դպրոցականների մեջ համագործակցելու կարողության ձևավորումը

Համագործակցային ուսուցումը լայն տարածում է գտել աշխարհում: Այն ավելի ու ավելի է կիրառվում՝ որպես աշխատանքային, դասավանդման և ուսուցման նոր մոտեցում և ռազմավարություն: Համագործակցային ուսուցումը խմբային աշխատանքի առավել բարձր աստիճանն է, որը ենթադրում է խմբային աշխատանքի որոշակի նոր մշակույթի ձևավորում: Այն ընձեռում է հնարավորություններ բազմաբնույթ կրթական նպատակներին հասնելու համար, ինչպիսիք են ակադեմիական հասկացությունների, սկզբունքների և իրադարձությունների ընկալումը, միջանձնային հմտությունների զարգացումը և այլն: [4]

Աշխարհում տեղի ունեցող փոփոխությունները պահանջում են նոր մտածելակերպ, ընկալում, համագործակցային կարողություններ, նոր հմտություններ: Այս պայմաններում կարևոր է կրթության և հանրակրթության դերի վերաիմաստավորումը: Կրթական փոփոխությունների, զարգացման ուղղություններն ու մոտեցումները պահանջում են մանկավարժական գործընթացի կազմակերպման նոր ձևեր և մեթոդներ, դասավանդման և ուսուցման այլընտրանքային նոր մոտեցումներ: Դասավանդման խնդիրների լուծման նպատակով համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է: Համագործակցային ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանը ակտիվորեն ներգրավված են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում և յուրացվում է հենց աշակերտի միջոցով: Այդ ընթացքում կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը, այլև խմբային գործընթացի մշակմամբ հմուտ համգործակցողներ և գիտելիքների ակտիվ կիրառողներ ձևավորելը: Համագործակցությունը ստեղծում է ինքնաճանաչման ավելի բարձր մակարդակ, քան կարող են ապահովել անհատական ուսուցման եղանակները: Համագործակցային իրավիճակներում անհատները միտված են փոխներգործելու, նպաստելու միմյանց հաջողությանը, ձևավորելու հետաքրքրությունների լայն շրջանակ, հետևաբար տալիս են ճշմարիտ հետադարձ կապ:Այն ընձեռում է հնարավորություններ բազմաբնույթ կրթական նպատակներին հասնելու համար, ինչպիսիք են ակադեմիական հասկացությունների, սկզբունքների և իրադարձությունների ընկալումը, միջանձնային

հմտությունների զարգացումը և այլն: Ժամանակակից ուսուցման պրակտիկայի լավագույն օրինակը փոքր խմբային աշխատանքն է, որի արմատները կարելի է գտնել սոցիոլոգների և ժամանակակից մանկավարժների աշխատանքներում:[4]

Համագործակցությունը խթանում է առաջադիմությունը: Հոգեբանների հետազոտությունները ցույց են տալիս, որ պրպտողական խնդիրների լուծումը այս կամ այն առարկայի գիտելիքների տիրապետման միջոցներից մեկն է և նպաստում է ճանաչողական ինքնուրույնության և ստեղծագործական մտածողության զարգացմանը: Համագործակցությունն ուսուցման գործընթացը դարձնում է առավել գրավիչ և հետաքրքրական՝ բոլոր սովորողների համար ապահովելով մասնակցության հնարավորություններ: Այն թույլ է տալիս դասավանդողին՝ լուծելու ավանդական մեթոդներով իրականացվող կամ գրեթե անհնար թվացող՝ բոլոր սովորողների ակտիվ մասնակցության ապահովման հարցը: Լսարանը դառնում է ընդհանուր նպատակներ ունեցող փոքր խմբերի հավաքականություն, որտեղ հեշտությամբ կարելի է լուծել ամենաբարդ մանկավարժահոգեբանական խնդիրները՝ անկախ առարկայից և թեմայից: Սովորողներն իրենց ավելի ազատ , անկաշկանդ են զգում փոքր համագործակցային խմբերում աշխատելիս, որտեղ ստանում են ինքնադրսևորման լայն հնարավորություններ: Նրանք համատեղ ջանքերով առավել հեշտությամբ են ընկալում նոր նյութը՝ յուրաց նելով գիտելիքը և կիրառելով այն:

Փոքր խմբերով աշխատելու առավելությունները

Համագործակցային ուսուցման ընթացքում շատ կարևոր է խմբերի մեծությունը: Առավել արդյունավետ են համարվում 4-5 հոգուց բաղկացած խմբերը: Այդպիսի խմբերում աշակերտները առավել մեծ ակտիվություն դրսևորելու հնարավորություն ունեն:Չորս հոգանոց խմբերում կարևորվում է յուրաքանչյուր աշակերտի անհատական պատասխանատվությունը և միաժամանակ ձևավորվում է կոլեկտիվ աշխատանքի մթնոլորտ: Խմբի մեծությունը կախված է դասի նպատակից և ընտրված մեթոդից Փոքր խմբերով աշխատանքը էապես մեծացնում է աշակերտի ակտիվությունը դասապրոցեսում: Ակնհայտ է , որ հնարավոր չէ արդյունավետ սովորել միայն դիտողի, լսողի, պասիվ վիճակում գտնվելով: Աշակերտն ավելի լավ է սովորում, երբ ակտիվ մասնակցում է գործընթացին:Փոքր խմբերով ուսուցումը կարևորվում է նաև այն առումով, որ դասարաններում աշակերտների խտության մեծացման արդյունքում զգալիորեն դժվարանում է ուսուցման ֆրոնտալ անհատական հարցման ձևերի կիրառումը Երբ ուսուցիչն աշխատում է դասարան (մեծ) խմբի հետ, ապա

աշակերտները արտահայտվելու, քննարկելու ավելի քիչ հնարավորություններ են ունենում Փոքր խմբի պարագայում այդ հնարավորությունները շատ ավելի մեծ են:
Փոքր խմբերով ուսուցումը ունի հետևյալ նպատակները.

- զարգացնում է խնդիրներ լուծելու կարողություն,
- ձևավորում է հաղորդակցման հմտություն,
- աշակերտները սովորում են միմյանցից,
- զարգանում է աշակերտների պատասխանատվության զգացումը,
- միմյանց հաշվետու լինելու հատկությունը՝ խմբի ընդհանուր հաջողությունն ապահովելու հարցում,
- խթանում է թիմային աշխատանքը,
- ապահով և նպաստավոր միջավայր է ստեղծում գիտելիքներն ու հմտությունները դրսևորելու համար,
- քննարկումների միջոցով ամրապնդվում է աշակերտների համոզմունքները,
- ընձեռում է ակտիվ մասնակցություն և ինքնադրսևորման հնարավորություն[4]:

Համագործակցային ուսուցման մեթոդներ

Գոյություն ունեն համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ, որոնք ունեն ինչպես նմանություններ, այնպես էլ տարբերություններ: Ստորև ներկայացնում ենք համագործակցային ուսուցման մի շարք մեթոդներ: Դրանք են՝ աշակերտների թիմային առաջադիմություն, խճանկար, շրջագայություն պատկերասրահում, երեք բանալի և մեկ կողպեք, հինգրոպեանոց ազատ շարադրանք:

1. **Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ**: Համագործակցային ուսուցման այս մեթոդը մշակվել է Ջոն Հոփկինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի կողմից: Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից՝ օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛ առանձին աշակերտների, և՛ խմբերին:

2. **Խճանկար:** Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է: Այն մշակվել և փորձարկվել է Տեխասի համալսարանում՝ Էլիոթ Արոնսոնի և նրա գործընկերների կողմից, այնուհետև լրամշակվել է Սլավինի և վերջինիս գործընկերների կողմից: Խճանկարը դասարանում կարող է կիրառվել տարբեր ձևերով: Ներկայացնենք դրանցից

մեկը: Աշակերտներին կարելի է բաժանել չորս կամ հինգ անդամ ունեցող տարասեռ խմբերի: Յուրաքանչյուր խմբին տալ դասի մեկ հատված և աշխատելու համար որոշակի ժամանակ: Այն լրանալուց հետո խմբերը ներկայացնում են իրենց հատվածը՝ կարդում են, բառերը բացատրում, դուրս գրում ուղղագրական արժեք ներկայացնող բառեր, դրանցով կազմում նախադասություններ, կատարում լեզվական աշխատանքներ և այլն: Յուրաքանչյուր խումբ սովորում է դասի մեկ հատվածը, բայց արդյունքում սովորում են ամբողջ դասը՝ դադարեցնելով աշխատանքը և ուշադիր լսելով բոլոր խմբերի պատասխանները: Կարող է ունենալ նաև փորձագետների խումբ՝ «Ջիգսո 2», որի փուլերն են.

- նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում,
- աշխատանք փորձագիտական խմբում,
- աշխատանք ուսումնական խմբում,
- ավարտական աշխատանք,
- ամփոփում:

3. Շրջագայություն պատկերասրահում: Սա «Խճանկար» մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ: Կրտսեր տարիքի աշակերտների հետ աշխատելիս խմբերին կարելի է տալ նույն առաջադրանքը կամ խնդիրը: Աշխատանքը վերջացնելուց հետո, համեմատելով մյուս խմբերի աշխատանքների հետ, աշակերտները հետադարձ կապ են ապահովում:

4. Երեք բանալի և մեկ կողպեք: Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով: Այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում, որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ կան: Աշակերտներին առաջարկում ենք դասից դուրս գրել երեք նախադասություն (երեք բանալի), որը կարևոր է այդ նյութը յուրացնելու համար, բնագրից ընտրել մեկ նախադասություն (կողպեք), որը կամփոփի, կընդհանրացնի ասելիքը, միտքը, գաղափարը:

5. Հինգրոպեանոց ազատ շարադրանք: Հինգրոպեանոց ազատ շարադրանքի մեթոդը կարող է կիրառվել ինչպես դասի խթանման փուլում, այնպես էլ կշռադատման՝ ելնելով դասի նպատակից և թեմայից: Ընտրում ենք թեման և առաջարկում հինգ րոպեի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո դադարեցնում են աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրած շարադրանքը: [3]

Ուսուցիչը միանգամից, մի դասի ժամանակ չի կարող օգտագործել մեթոդների հարուստ զինանոցը: Նա պետք է որոշակի դասի համար կատարի ուսուցման մեթոդի, հնարի ընտրություն: Ուսուցման մեթոդի հիմքում ընկած են այն խնդիրները, որոնք լուծվում են դասի ժամանակ կամ դասի որոշակի փուլում. բացի դասի նպատակից ու խնդիրներից, մեթոդների ընտրությունը կախված է նաև՝

- դասի տիպից ու կառուցվածքից,
- ուսումնական նյութի բովանդակությունից,
- աշակերտների տարիքից,
- դասարանում աշակերտների թվաքանակից,
- պատրաստվածության մակարդակից,
- շահագրգռվածությունից ու հետաքրքությունից,
- ուսումնադիտողական պարագաների առկայությունից ,
- ժամաքանակից,
- ուսուցչի պատրաստվածության մակարդակից և այլ գործոններից

Համագործակցային ֆորմալ խումբ- փոքր խումբ են երկուսից չորս անդամ, կարող են գործել մեկ դասաժամից մինչև մի քանի շաբաթ և իրականացնել որևէ առաջադրանք: Այս խմբերում աշակեչտնեչն աշխատում են ընդհանուր նպատակի շուրջ: Նրանք պետք է համագործակցեն, կիսվեն գաղափարներով, աջակցեն և խրախուսեն միմյանց:

Համագործակցային ոչ ֆորմալ խմբեր- ժամանակավոր գործող խմբեր են, որոնց գործունեությունը կարող է տևել մի քանի րոպեից մինչև դասաժամի ավարտը: Այս խմբերը կարող են օգտագործվել դիդակտիկ նյութերի, ուսումնական ֆիլմերի ցուցադրման ժամանակ որոշակի տրամադրություն ստեղծելուն, անհրաժեշտ նյութեր նախապատրաստելու, կարճ քննարկումներ կատարելու նպատակներով:

Համագործակցային ուսուցման հենակետային խմբեր -կայուն անդամներով երկարաժամկետ, տարասեռ խմբեր են, որոնց աշխատանքը տևում է ողջ դասընթացի կամ ծրագրի շրջանակներում: Այն ներառում է բացակա

ընկերներին աջակցելը, անցած ուսումնական նյութը բացատրելը, օգնել տնային առաջադրանքների կատարմանը և այլն:

Տարրական դպրոցում ֆորմալ, ոչ ֆորմալ և հենակետային խմբերի ձևավորումն ընդունելի է: Ուսուցիչն ինքն էորոշում, թե տվյալ թեմայի շրջանակներում ինչպիսի խմբեր կարելի է ձևավորել՝ կարևորելով ուսումնական նյութը առանձնահատկությունները, նպատակները, սովորողների հետաքրքրությունների սահմանները,, նրանց զարգացվածության աստիճանը, խմբում աշխատելու ցանկությունը:

Խմբում յուրաքանչյուր աշակերտի տրվում է որևէ դեր՝ առաջնորդ, ընդդիմախոս, նյութերի վերլուծաբան, փորձագետ, դիտորդ, գրառող, կազմակերպիչ, ստուգող՝ գնահատող, օգնական, խրախուսող, երազող, ժամանակը պահող և այլն: [1]

Համագործակցային ուսուցման տարրերը

Համագործակցային ուսուցման տարրերը ըստ Ջոնսոնների հինգն են՝

1. Դրական փոխկախվածություն. Խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու, աջացելու մթնոլորտ: Սովորողի ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն: Այն նպաստում է հանդուրժողականության և վստահության ձևավորմանը: Քննարկումներն ու ձգտումներն օգնում են խմբի անդամների փոխհարաբերություններին:
2. Դեմ առ դեմ, խթանող փոխազդեցություն. Խմբի անդամները համգործակցում են, փոխանակում են տեղեկություններ, կարծիքներ և ռեսուրսներ, մշակում և վերլուծում են տեղեկությունը, ապահովում են հետադարձ կապ, քաջալերում և աջակցում են միմյանց՝ ընդհանուր նպատակին հասնելու համար:
1. Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն. Խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու, կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար, խմբի մաս է, գաղափարներով և մտքերով կիսվում է մյուս անդամների հետ, պատրաստ է ներկայացնելու խմբի աշխատանքի արդյունքը:
2. Սոցիալական հմտություններ.Խմբի անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր՝ անաղմուկ աշխատանք, ներկայություն մինչև աշխատանքի ավարտը, խոսողին հետևելը, առաջադրանքը կատարելիս ներդում ունենալը:
3. Խմբային գործընթաց. Խմբի անդամների հաջողությունների, փոխհարաբերությունների, համագործակցության բարելավման հետ կապված

խնդիրների քննարկման փուլ է: Դրանք զարգացնում են սոցիալական հմտությունները, ապահովում են խմբի անդամների գործողությունների և մասնակցության հետադարձ կապը:

Հետագայում այդ տարրերին Պասի Սալբերգի կողմից ավելացվեց փոխներգործուն/ինտերակտիվ առաջադրանքը որպես համագործակցային ուսուցման 6-րդ տարր: Նրա կարևոր չափանիշը այն է, որ խմբի անդամները հեշտությամբ մասնակցեն առաջադրանքի կատարմանը [5]:

Համագործակցային ուսուցման հիմնական սկզբունքները

Եթե հետևյալ բոլոր սկզբունքները չեն պահպանվում, համագործակցային ուսումը տեղի չի ունենում: Չորս հիմնական սկզբունքները (Սպենսեր Կագանի համաձայն)՝

ա) Զուգահեռաբար տեղի ունեցող շփումներ՝ ուսման գործընթացում աշակերտների միջև տեղի են ունենում բազում շփումներ: Այսպիսով, յուրաքանչյուր անհատ աշակերտի ակտիվ մասնակցության տևողությունը շատ ավելի երկար է, քան այն կլիներ ավանդական եղանակով ուսուցման դեպքում:

բ) Անձնական պատասխանատվություն՝ աշակերտներից յուրաքանչյուրը պետք է ավարտի աշխատանքի իր բաժինը՝ խմբի աշխատանքում ներդրում կատարելու համար: Յուրաքանչյուր աշակերտ իր աշխատանքի մասին զեկուցում է խմբին: Դասընկերները գիտեն խմբում ներգրավված յուրաքանչյուր աշակերտի ներդրման մասին, և յուրաքանչյուր անձ պատասխանատու է առաջադրանքի կոնկրետ մասի համար

գ) Կառուցողական փոխկախվածություն՝ անհատական զարգացումն ու խմբի զարգացումը դրականորեն փոխազդում են միմյանց, եթե աշակերտի զարգացման համար պահանջվում է դասընկերների զարգացումը, և եթե խմբի հաջողությունը միաժամանակ նշանակում է նաև մեկ այլ խմբի հաջողություն:

դ) Հավասարաչափ մասնակցություն՝ աշակերտները մասնակցում են աշխատանքին ըստ իրենց ընդունակությունների: Այս նպատակին հնարավոր է հասնել աշխատանքի բաշխման և առաջադրանքներ հանձնարարելու միջոցով;

Համագործակցային աշխատանքի առավելությունները

Համագործակցային ուսուցումը՝ որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել:Համագործակցային ուսուցման մեջ էական են ոչ միայն ակադեմիական գիտելիքներ և հմտություններ սովորելը, այլև կարևոր է խմբային զարգացման մշակման միջոցով դառնալ հմուտ համագործակցողներ (համագործակցային հմտություններ) և գիտելիքների ակտիվ կիրառողներ (մտածողության հմտություններ): Համագործակցային ուսուցման իմաստն է՝

- Յուրաքանչյուր անհատի դարձնել ուժեղ անձնավորություն ժամանակակից հասարակության մեջ:
- Անհատին դարձնել ակտիվ և կարող լինելու խմբի անդամ և համագործակցելու:

Եթե աշակերտներին պարզապես բաժանենք խմբերի և առաջարկենք միասին աշխատել, ապա դա չի նշանակում, որ նրանց մղել ենք արդյունավետ համագործակցության: Ոչ բոլոր խմբային աշխատանքներն են, որ կարող են ապահովել համագործակցային ուսուցում: Շատ են պատահում դեպքեր, երբ ընդհանուր առաջադրանքը իրականացնելու ուղղությամբ խմբի ջանքերը արդյունք չեն ունենում: Առաջադրանքը, մեթոդը պլանավորվում և իրականացվում է այնպես, որ սովորողին մղի համագործակցության և նպաստի նրա ակտիվ մասնակցությանը ուսուցման պրոցեսին:[4]

Դասի պլան

Դասարան՝ 3-րդ

Առարկա՝ Ես և շրջական աշխարհ

Դասի թեման՝ << Ընկերություն>>

Դասի նպատակները՝

- Կմտածեն, կքնարկեն թե ի՞նչ է ընկերությունը,
- Կիմանան ո՞վ է իսկական ընկերը,
- Կկարողանան արտահայտել սեփական մտքերը ընկերության մասին
- Կիմանան ինչպես կարելի է պահպանել ընկերությունը:

Դասի խնդիրները՝

- Ձևավորել կարողություն լինել լավ ընկեր:
- Ընկերություն անելու ընդունակության կարողությունների զարգացում:
- Համագործակցելու կարողություն:

Կիրառվող մեթոդներ՝ Մտագրոհ, հարց ու պատասխան:

Ձեռնական պարագաներ՝ ընկերության թեմային վերաբերող նկարներ:

Դասի ընթացքը

Խթանման փուլ

Մտագրոհի մեթոդի միջոցով վեր հանել աշակերտների ունեցած գիտելիքները ընկերության մասին:

Բարի

Կարեկցող

Ազնիվ

Հավատարիմ

Ուշադիր

Նվիրված

Անկեղծ

Ներողամիտ

Իմաստի ընկալման փուլ

Աշակերտները բաժանվում են 5 -6 հոգանոց խմբերի և կատարում են հետևյալ առաջադրանքը.

- Դիտել դասագրքում զետեղված նկարները և ասել, թե որ նկարն է իրենց դուր գալիս և ինչո՞ւ:

Յուրաքանչյուր խումբ ընտրում է իրեն դուր եկած նկարները և պատրաստում են մեկնաբանություններ:



Ապա հանձնարանվում է ընթերցել դասը: Ընթերցելու ընթացքում աշակերտները պետք է նշումներ կատարեն տետրում: Աշակերտները նշում են այն հատվածը, որը հիշեցրեց իրենց կյանքից մի դրվագ: Օրինակ՝ (երբեք չի կարելի խաբել ընկերոջը: Մի օր կբացվի սուտը, և ընկերդ այլևս քեզ չի վստահի) հատվածը աշակերտներտին կարող է հիշեցնել նմանատիպ մի դրվագ իր կյանքից կամ տեսած ֆիլմից, կարդացած գրքից, լսած պատմությունից և այլն: Աշխատանքն ավարտելուց հետո 2-3 աշակերտ պետք է ընթերցեն իրենց նշումները:

Այն իրականացնել ստուգիչ հարցերի միջոցով՝

- Ինչո՞ւ այդ հատվածը գրավեց քո ուշադրությունը:
- Ինչի՞ մասին քեզ մտածել տվեց և այլն:

Կշռադատման փուլ

Աշխատանքը կատարվում է խմբերով: Առաջադրանքն է՝ մեկնաբանել դասի վերջում զետեղված նկարը: Նկարներում պատկերված է մի իրավիճակ, երբ երեք ընկերները ուրախ զրուցելով միասին ինչ-որ տեղ են գնում: Հանկարծ նրանցից մեկը սայթաքում և վայր է ընկնում: Ընկերներից մեկն անմիջապես մոտենում է և օգնում: Իսկ երրորդ ընկերը հրաժարվում է՝ բերելով ինչ-որ պատճառաբանություն: Վերջին նկարում պարզ երևում է, որ ընկերներից մեկը հեռանում է, իսկ մյուսը օգնում և ուղեկցում է վայր ընկած ընկերոջը: Յուրաքանչյուր խումբ պետք է կարողանա լավ ընկալել նկարներում պատկերված իրավիճակները, մեկնաբանեն և արտահայտեն իրենց վերաբերմունքը մի քանի նախադասությամբ:

Այն իրականացնելու համար անհրաժեշտ է ուղղորդող հարցեր.

- ի՞նչ ես կարծում, ինչո՞ւ ընկերներից մեկը չցանկացավ օգնել վայր ընկած ընկերոջը,
- ինչպե՞ս կգնահատես երկրորդ ընկերոջ արարքը, որն օգնեց վայր ընկած տղային
- ի՞նչ խորհուրդ կտայիր հեռացող տղային, որն չցանկացավ օգնել ընկած ընկորոջը:

Ամփոփման փուլում իրականացնել <<խոսող քար>> հնարի կիրառումը: Դասի ավարտին, աշակերտները շրջանաձև կանգնում են և իրար փոխանցում են որևէ իր: Առաջինը կատարում է ուսուցիչը և իրը փոխանցելուց առաջ նշում է մի շատ կարևոր միտք օրվա դասի մասին օրինակ՝ իսկական ընկերը դժվարության մեջ է երևում, ապա իրը փոխանցում կողքին կանգնած աշակերտին: Յուրաքանչյուր աշակերտ, ում ձեռքին հայտնվում է իրը, պետք է բարձրաձայն նշի ընկերությանը վերաբերող մի կարևոր միտք, որ ինքը սովորեց այսօրվա դասից:

Երբ բախտն առանձնապես բարեհաճ է մարդու նկատմամբ և ուզում է շնորհել աշխարհում մեծագույն երջանկությունը, նրան հավատարիմ ընկեր է տալիս:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Համագործակցային ուսուցման կիրառման ժամանակ յուրաքանչյուր սովորող աշխատում է իրեն հատուկ անհատական տեմպով: Նա պատասխանատու է ոչ միայն իր, այլև ողջ կոլեկտիվի աշխատանքի և հաջողության համար, ձևավորում է համարժեք գնահատական անձի սեփական հնարավորությունների, կարողությունների և թերությունների վերաբերյալ: Ուսուցիչը այլևս կարիք չունի դանդաղեցնելու կամ արագացնելու այս կամ այն սովորողի առաջադիմության տեմպը: Այս հանգամանքը դրական է ազդում դասարանական կոլեկտիվի մթնոլորտի վրա:

Զգայական հարմարավետ մթնոլորտի ստեղծումը, դասարանում յուրաքանչյուրի համար, անկախ նրա կարողությունների ձևավորվածության մակարդակից, առաջնահերթ կարևորության խնդիրներից է, որով մեծապես պայմանավորված է հետագա ուսուցման ողջ հաջողությունը, քանի որ այն ստեղծում է բարենպաստ պայմաններ՝ դպրոցում սովորելու դրական դրդապատճառների մոտիվացիայի ձևավորման համար:

Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձևավորմանը, օգնում է ուսուցչին հասկանալու էությունն ու պլանավորելու դասը, պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետ համագործակցային ուսուցման կազմակերպումը: Համագործակցային ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանն ակտիվորեն ներգրավված են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում է հենց աշակերտի միջոցով: Համագործակցությունն ստեղծում է ինքնաճանաչման ավելի բարձր մակարդակ, քան կարող են ապահովել մրցակցային կամ անհատական ուսուցման եղանակները: Համագործակցային իրավիճակներում անհատները միտված են փոխներգործելու, նպաստելու միմյանց հաջողությանը, ձևավորելու հետաքրքրությունների լայն շրջանակ և կազմելու միմյանց կարողությունների մասին իրական պատկերացումներ, հետևաբար տալիս են ճշմարիտ հետադարձ կապ:

Համագործակցային ուսումնառությունը կարող է նպաստել երեխաների կարողությունների ըստ ամենայնի բացահայտմանը: Համագործակցային ուսումնառության բոլոր մեթոդների համար էլ ընդհանուր է հետևյալ գաղափարը՝ աշակերտները համագործակցում են միասին սովորելու նպատակով և պատասխանատու են ինչպես իրենց, այնպես էլ թիմակիցների ուսումնառության համար: Թիմային ուսումնառության բոլոր մեթոդներում առանցքային նշանակություն ունեն երեք հասկացություններ՝

- թիմային պարգևներ (թիմային առաջադիմության գնահատում),
- անհատապես հաշվետու լինելու անհրաժեշտություն,
- հաջողության հասնելու հավասար հնարավորություններ:

Համագործակցային ուսուցումը նպաստում է ինչպես առարկային բնորոշ կողմերը ի ցույց դնելուն, այնպես էլ դասապրոցեսի կազմակերպման ձևերին ու մեթոդներին: Մասնավորապես, դասի կազմակերպման համագործակցային մեթոդի կիրառման ժամանակ նպաստավոր մթնոլորտ է ստեղծվում սովորողների ձևավորված խմբերում յուրաքանչյուր սովորողի ինքնահաստատման և ինքնադրսևորման համար: Տարբեր տիպի քննարկումները, բանավեճերը, կարծիքների փոխանակումը սովորողին ինքնագնահատման հնարավորություն են տալիս, որն ուղեկցվում է տարբեր հոգեբանական անցումներով և առանձին դեպքերում հույզերով: Մյուս կողմից կատարվող հետաքրքիր և բավանդակալից աշխատանքները սովորողների մոտ զարմանքի, հուզականության, գեղեցկության զգացողությունն են առաջացնում, որն էապես նպաստում է հետաքրքրությունների առաջացմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ասատրյան Լ. Թ.,Կարապետյան Ն.Զ. <<Ես և շրջակա աշխարհը>>ինտեգրված դասընթացի դասավանդման մեթոդիկա,(ուսումնամեթոդական ձեռնարկ), Երևան, Արտագես 2016թ.,224էջ

2. Ասատրյան Զ.,Տարրական կրթության մանկավարժություն, Երևան,Տիգրան ՄԵԾ 2017թ.,152էջ

3. Ափոյան Ա., Համագործակցային ուսուցումը տարրական դասարաններում,

4.Սահակյան Վ. Ա. Համագործակցային ուսուցման, համագործակցային մեթոդների, հնարների կիրառման արդյունավետ հմտությունների ձևավորումը պատմության դասերին, ՇՊՀ, 2020:

5.https://hy.wikipedia.org/wiki/%D5%80%D5%A1%D5%B4%D5%A1%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%A1%D5%AF%D6%81%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6_%D5%B8%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%B8%D6%82%D5%B4